600.0073.28.02.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

28 փետրվարի 2011 թվականի №73Ա
քաղ. Երևան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» №272Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝

1) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

   ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 4.230 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 5.076 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

   բ. հզորության ամսական վճարը՝ 2619.75 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 3143.70 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

2) «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

   ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 24.066 դրամ/կՎտժ՝առանց ավելացված արժեքի հարկի և 28.879 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

   բ. հզորության ամսական վճարը՝ 913.87 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1096.64 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

գ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 24.066 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 28.879 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

3) «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 6.70 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 8.04 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 909.56 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1091.47 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

4) «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 3.708 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 4.450 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 179.17 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 215.00 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

5) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 0.718 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 0.862 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 435.43 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 522.52 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

6) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը (հաղորդման ցանց մուտք գործած էլեկտրաէներգիայի քանակի համար)՝ 0.827 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 0.9924 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար՝ 0.827 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 0.9924 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

7) «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական շուկային էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման հաստատագրված ամսական վճարը՝ 84,0718 միլիոն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 100,8862 միլիոն դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը՝ 0.1815 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, առանց ավելացված արժեքի հարկի և 0.2178 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, ներառյալ ավելացված արժեքի հարկը.

8) «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման հաստատագրված ամսական վճարը՝ 9.2429 միլիոն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 11.0915 միլիոն դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման սակագինը՝ 0.020 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, առանց ավելացված արժեքի հարկի և 0.024 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

1) 2010 թվականի մարտի 1-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի

սակագների մասին» № 59Ա որոշումը,

2) 2010 թվականի մարտի 1-ի «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից առաքվող ջերմային էներգիայի սակագների մասին» № 61Ա որոշումը,

3) 2010 թվականի ապրիլի 20-ի «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների մասին» № 195Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
28 փետրվարի 2011թ.